ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 օգոստոսի 2025 թվականի № 319-Ա

ԳԱՅԱՆԵ ԲԱԴԵՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի՝ 2024 թվականի դեկտեմբերի 30-ի № 536-Ա որոշումը և *Գայանե Բադեյանի*՝ 2025 թվականի օգոստոսի 6-ի № 35 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Պոռշյանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Գայանե Բադեյանին*** տրամադրել 2025 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդից տասն աշխատանքային օր՝ 2025 թվականի օգոստոսի 28-ից սեպտեմբերի 10-ը ներառյալ:

2. ***Գայանե Բադեյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Պոռշյանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության հաշվապահ ***Ռուզաննա Մելքոնյանի***, իսկ բնակչության առաջնային բժշկական օգնության և սպասարկման իրականացումը կազմակերպության ընտանեկան բժիշկ ***Սալոմե Խարչիլավայի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

2025 թվականի օգոստոսի 7
ք. Հրազդան